



Ծիրանը՝ Հայաստանի Քաղցրահամ Ոսկին

Ծիրանը շատ օգտակար է և առողջարար պտուղ է, որ իր մեջ կը պարունակե կենսականօրեն անհրաժեշտ բազմաթի սննդանիւթեր: Յատկապէս Ա վիթամիսի պարունակութեամբ ծիրանը համագոր է կովու կարագին և հաւու թարմ միսին:

Մեր նախահայրերը կը հաւատային, թէ ծիրանը մեզ հեռու կը պահէ 12 տեսակ հիւանդութիւններէ:

Այս պտուղը կ'աճի նաեւ տարբեր երկիրներու մէջ, բայց Արարատեան դաշտի մէջ աճած ծիրանը տարբեր է:

Հայկական ծիրանի համբաւով օտարները Հայաստանը կը կոչէին ծիրանի երկիր:

Ծիրանը հայկական հողի ամենահին ու ամենաքաղցրահամ պտուղն է:

Քրիստոսէ առաջ 69 թուին, գարնան Հայաստան ներխուժած հռոմիացիները հիացմունքով կ'ուտէին այդ համեղ պտուղը:

Ալեքսանդր Մակեդոնացի, հետագային նաեւ հռոմիացի զօրավար Լուկուլլոսի փափաքով զինուորները Հայաստանէն ծիրանիի տունկերը փոխադրեցին իրենց երկիրները, որպէս շատ արժէքաւոր ծառատեսակի տունկեր և անոր պտուղը ստացաւ «Հայկական սալոր» անունը:

Շուրջ 2000 տարի առաջ Եւրոպայի մէջ գաղափար չունէին ծիրանի մասին: Ծիրանին Եւրոպական երկիրներ թափանցեց Հայաստանի սարահարթէն Յունաստան և հոմ տարուած տունկերով:



Եւ այսօր, ինչպէս հազարամեակներ առաջ, ծիրանին կը շարունակէ մնալ Հայաստանի մէջ տարածուած ամենահիմնական պտղատու ծառը:

Հայկական Տուտուկ կամ Ծիրանափող
Պատահական չէ, որ հայկական ամենայայտնի երաժշտական գործիքը ծիրանափող կը կոչուի, այսինքն ծիրանէն պատրաստուած փող: Հայկական տուտուկը բացառապէս ծիրանի ծառին փայտէն կը պատրաստուի:

Հայկական տուտուկին արմատները մինչեւ Տիգրան Մեծի ժամանակաշրջան կը հասնի:

Հայկական տուտուկը իւրայատուկ հնչողութիւն ունի, ան գրեթէ միշտ հայկական պարերու և երգերու մեղեդիներու կ'ուղեկցի: Յայտնի է տուտուկի չորս հիմնական ձեւեր, որոնք իրենց երկարութեամբ իրարմ կը տարբերին՝ 28 և մինչեւ 40 սմ.:

Մինչեւ օրս տուտուկ պատրաստող վարպետները կը շարունակեն տարբեր չափի և տեսակի տուտուկներ պատրաստել: Շատ վարպետներ փորձած են տուտուկ

պատրաստել այլ ծառի փայտէն, սակայն այդ տուտուկները չեն ունեցած այն հնչողութիւնը, որ ունին ծիրանի ծառէն պատրաստուածները:

Հայկական տուտուկը և իր երաժշտութիւնը 2007 թուականին ընդգրկուած են ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկութեան ոչ նիւթական ժառանգութեան ցանկին մէջ:




Թիւր ասրաստ՝ Որթս Կարտս-Տիքուրթսն
Նկարնարոտ՝ Ուճճի Բեռոտսն

ԱՆՀԱՒԱՏԱԿԻ ԲԱՅՑ ԻՐԱՒ



- *Մեր ուղեղը կը ներկայացնէ մեր ամբողջ մարմնի ծանրութենէն միայն 2 առ հարիւրը, սակայն ան կը գործածէ մեր մարմնին ուժանիւթին 50 առ հարիւրը:
- *Մեղր պատրաստող մեղուները երկու ստամոքս ունին:
- *Մենք չենք փռնգտար, երբ կը քնանանք:
- *Աշխարհի շուրջ գոյութիւն ունին աւելի քան 30 հազար պատկերասփիւռի կայաններ:
- *Գոյութիւն ունին մանկայի աւելի քան 1000 տեսակներ:
- *Կարգ մը խնձորներ ներսէն վարդագոյն են:
- *Կարգ մը օձեր կրնան տեսնել ստնաւորներու մարմիններու արձակած տաքութիւնը:
- *Կուֆի տաք գնդակ մը օդին մէջ աւելի հեռու պիտի թռչի, քան պաղ գնդակ մը:
- *Հին ժամանակներուն գործօն հրաբուխներ գոյութիւն ունեցած են լուսինի վրայ:
- *Անշրպետանաւ մը մեր աստղահոյլին ծայրը պիտի հասնի մօտաւորապէս 450 միլիոն տարիէն:



ԽԱՍՈՂԵՐ

Կրնա՞ս ամբողջացնել թիւերու բուրգը՝ գիտնալով որ իւրաքանչիւր շրջանակի մէջի թիւը հաւասար է անոր տակը գտնուող երկու թիւերուն գումարումին:

21		12	
13	8		5



Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու կերպարները:



Կրնա՞ս օգնել այս կոկորդիլոսին գտնելու իր ուտելիքին հասցնող ճամբան:

ՉԱՐԻՔԻ ՇՐՋԱՆԱԿ



Ժամանակին թագաւոր մը կար, որ շատ անգութ ու անարդար էր: Անոր հպատակները կը փափաքէին զինք գահընկէց ընել կամ կը ցանկային անոր մահը: Օր մը, թագաւորը, զարմացնելով բոլորը, կը յայտարարէ, թէ որոշած է ինքն էջ մը բանալ, ըսելով. «Այլեւս ո՛չ անարդարութիւն, ո՛չ ալ խստութիւն պիտի ընեմ»:

Թագաւորը կը յարգէ իր խօսքը եւ կը վերածուի մեղմ ու արդար միապետի մը: Այս փոփոխութենէն

ամիսներ յետոյ, իր նախարարներէն մէկը բաւարար համարձակութիւն կ'ունենայ հարցնելու փոփոխութեան պատճառը: Թագաւորը կը պատասխանէ.

«Օր մը երբ կառքով անտառէն կ'անցնէի, տեսայ շուն մը, որ աղուէս մը կը հալածէր: Աղուէսը փախաւ, սակայն շունը յաջողեցաւ անոր ոտքը խածնել: Յետոյ զիւղ գացի եւ տեսայ նոյն շունը, որ մարդու մը դէմը կանգնած կը հաջէր: Այդ վայրկեանին մարդը քար մը նետեց շունին վրայ ու կոտորեց անոր ոտքը: Մարդը շատ չէր հեռացած, երբ ձի մը կից զարկաւ մարդուն՝ փշրելով անոր ծունկին ոսկորը: Ձին սկսաւ վազել, բայց փոսի մը մէջ ինկաւ եւ ոտքը կոտորեց: Այս բոլորը տեսնելով մտածեցի, թէ ամէն չարիքի այլ չարիք մը կը յաջորդէ: Եթէ ես շարունակեմ չարութիւնս, վստահաբար ինծի եւս չարիք պիտի հասնի, ուստի այդ պատճառով որոշեցի փոխուիլ»:

Նախարարը կը հեռանայ համոզուած ըլլալով, թէ ժամանակը հասած է այս «տկար» թագաւորը գահընկէց ընելու եւ անոր գահին տիրանալու: Այս մտածումներուն մէջ խորացած, չի տեսներ առջեւի փոսը, եւ իյնալով՝ վիզը կը կոտորէ:



ԿԵՆՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ԻՆՉՈՐԻ ԸՆԶԱՌՈՒԻԾԸ ԻՐ ԱՄԱՐԸ ԾԱՌԵՐՈՒՆ ԿՐԱՅ ԿԸ ՊԱՀԷ

Ընձառիծը հսկայ վայրի կատու է, որ Ասիոյ եւ Ափրիկէի անտառներուն մէջ կ'ապրի: Ան առանձին կ'ապրի եւ ստիպուած է զգուշանալ միւս գիշատիչներէն՝ բորենիներէն եւ առիծներէն, որոնք յաճախ իր աւարին տիրանալու փորձեր կ'ընեն: Բայց այդ հզօր կատուն իր որսը անվտանգ ու ապահով պահելու հրաշալի միջոց գտած է: Ընձառիծը իր որսը կը քաշկռտէ ու կը տեղաւորէ ծառին վրայ: Այստեղ ոչ ոք կրնայ անհանգստացնել բժաւոր գիշատիչը եւ ան շուտով կը սկսի իր ճաշկերոյթը: Ուտելիքին մնացորդները ընձառիծը որպէս պաշար կը պահէ ճիւղերուն կամ փշակներուն մէջ:

Ինչո՞ւ գայլերը կ'ոռնան

Գայլերը կաթնասուններ են, որոնք շնագգիներու ընտանիքին կը պատկանին: Այս գիշատիչները վոհմակներով կ'ապրին եւ իրարու հետ հաղորդակցելու համար զանազան ձայներ կ'օգտագործեն՝ կը հաչեն, կը փնչացնեն, ակռաները կը չիչիկացնեն նաեւ կ'ոռնան: Գայլին ոռնոցը տխրութիւն, յուսահատութիւն, ձանձրոյթ կամ սպառնալիք կ'արտայտէ: Գայլին ոռնոցը կրնայ ծառայել նաեւ որպէս մօտալուտ վտանգի նախազգուշացում կամ ցեղակիցներուն յաջող որսի մասին տեղեկացնելու միջոց:

Գայլերը կ'ոռնան միայնակ կամ խմբովին, մարդոց վրայ սարսափ ազդող ձայն արձակելով գիշատիչները իրենց գտնուած վայրին մասին տեղեկութիւն կը փոխանցեն միւս գայլերուն եւ կամ կը հասկցնեն, որ այդ վայրին մէջ իրենց կան եւ լաւ կ'ըլլայ, որ անկոչ հիւրերը հեռանան:

Կորսուելու վտանգի ենթարկուած Փանտաները

Վայրի բնութեան մէջ կ'ապրին միայն 1600 փանտաներ:

Փանտան (արջակատու) արջերու ընտանիքին մէջ ամենէն քիչ թիւով անդամներ ունեցող անասունն է: Ան աշխարհի ամենէն աւելի կորսուելու վտանգի ենթարկուած անասուններէն մէկն է:

Այս հսկայ փանտաները կ'ապրին կեդրոնական Չինաստանի լեռներու անտառներուն մէջ: Փանտան իր սնունդին 99 առ հարիւրը կ'առնէ պամպուի եղէգներէն: Ան օրական պէտք է ուտէ 38 քիլօ եղէգ՝ ստանալու համար իրեն անհրաժեշտ սնունդը:

